№ 37 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 1

1897

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 1 № 37

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ռուբ. կէս տարեանը 6 ռուբ։ Առանձին համարները 5 շահի։

Ընտանեկան տարեկան 8 ֆր. կամ 3 բուրլի կէս տարեանը 5 ֆր. կամ բուրլի։

Ստացողներ փոխի համար տիտի տա. մել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև ժամը. բացի կիրակի և տօն օրերի

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն եղով իւրաքանչիւր բառին մի անդամուայ համար 1 շահի։ Ընտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների. նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգնեցէք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մերկաու մեր. Նամակներ Մարաղայից. Նամակ Սալմաստից. Նամակ խմբագրութեան. Հուպինկ քաֆ. ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.- ԸՐՏՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ.— Հեռագիրներ.

Օ Գ Ն Ե Ց Է Ք

—

Մեր եղբայրները քաղցած են, մեր քոյրերը մերկ են։ Օգնե՛ց՛ք նրանց, պատսպարեցէք նրանց

Ողորմութիւն արէք, պարոն,

Անտուն անտէր աղքատին։

Այս անտուն անտէրը՝ մեր եղբայրներն են և քոյրերն են։ Նրանք կորցրել են իրանց տուն ու տեղը, իրանց մտերիմներից շատերին. մէկը կորցրել է զաւակին, միւսը ծընողներին, մէկը եղբայրներին և քոյրերին, միւսը բոլոր ազգականներին։ Իսկ իրանք կիսախելագար թափառում են մեն մենակ աշխարհիս երեսին։

Սովը չէ, որ նրանց հասցրեց այդ օրին, սովը չէ, որ դրանց դուրս քշեց պապական օջախից, այլ շար բաղդի անգութ խաղը։

Օգնենք նրանց դէթ օրվայ հացը հայթայթելու, դէթ մերկութիւնը ծածկելու։ Մենք չենք կարող, և ոչ որ էլ չէ կարող մխիթարել խեղճերին, չենք կարող այլ ևս ուրախ ժպիտ դնել նրանց երեսին, որովհետև մենք անկարող ենք վերադարձնել նրանց, որոնք զոհվեցին ընդ միշտ։ Այդ չենք կարող, բայց գոնէ ազատենք մնացածներին սովից, կարօտութիւնից. տանք նրանց հաց, դգեստ, վերմակ, տուն, կացարան. գարմանենք տկարներին, սփոփենք նրանց մեր հոգատարութեամբ, քաղցր խօսքով, օգնենք, որ միմեանց որոնող, բայց ցրված փախստականները կարողանան միմեանց գտնել, մի բոպէ մոռանան իրանց ցաւը, վշտերը...

Ցնդ՝ ինչ որ մինչև այժմ արված է, շատ է աննշան և չնչին։ Գործը այսուհետև պէտք է սկսել։ Մեր առաջ կանգնած են 50,000 կարօտեալներ, որոնց պէտք է օգնութիւն տրվի։ Եթէ ուզում էք, որ իւրաքանչիւրը ստանայ և ուտելիք և հագնելիք, և իւրաքանչիւրի վրա հաշվենք միայն 10 բուրլի, այդ դէպքում ևս հարկաւոր կը դայ կէս միլիոն բուրլի։ Իսկ տասը բուրլին շատ քիչ գումար է, նրանով անկարելի է օգնել կարօտեալներին, սրբել նրանց արտասունքը... Կարիքները շատ շատ են։ Պէտք է աշխատենք այդ մարդկանց միջոց տալ, որ նոանք կարողանան վերադառնալ իրանց թշուառ հայրենիքը, իրանց հանգած օջախը, և փորձեն նորից նրանց շենացնելու, նորից կենդանացնելու։

Մեր եղբայրները քաղցած են, մեր քոյրերը մերկ են։ Օգնեցէք նրանց պատսպարեցէք նրանց։

Օգնեցէք... *Մշակ*

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ

II

Ահա տես իսկական պատմութիւնը, Մի կին շոր լուացող, որի անունն է Մարթայ առաջնորդարանում շոր էր լուանում։ Անց յայտնի Սարաճեան դադաշը. պ. Յ. Ք-հանցի հետ միասին (վերջինս պոլսեցի մի սնանկացած վաճառական է, որի վարկն չափազանց ընկած է) խեղճ կնոջ հետևեալ կերպով խաբում է։

«Մարթան բաջի, ինչ սիրուն ես, մարդ ունես թէ ոչ, խեղճիկ, բաս քո սիրտդ մարդ չի ուզում, ես քեզ կառնեմ իմ մոնթիս եթէ. . . . . (այսինքն եթէ մեր պահանջքն կատարես)»։

Տես Մարթան բաջի, էս դեղին մեճիտիէն էլ կտամ քեզ, որ հաւատաս քեզ անպատճառ կառնեմ իմ մոնթիս. վերջապէս այդ անպատկառները, մեր թշնամի քրդերից աւելի ստորները, աւելի խեղճ կնոջ իրենց կիրքն են քցում, և զորս դու պատուիրեցիր բռնաբարում են։

Քանիցս խեղճ կինը գնում է մեր Ս. դադաշի մօտ և պահանջում է նրանից իրեն տւած խոստումը, բայց Ս. դադաշը միշտ մերժելով, վռնտել է տալիս առաջնորդարանից։ Խեղճ կինը անճարացած, այս անգամին զիմում է մեր աղա հոգաբարձուներին, բայց այդ տեղից էլ մի դրական պատասխան չստանալով վճռում և գնում է Ս. Էջմիածին Վեհափառ Հայրիկի մօտ գանգատ։

Հայրիկը առաջ չի հաւատում կնոջը ասում է թէ դու՝ սուտ ես ասում ես Ս. դադաշից այդպիսի մի բան չկամ հաւատում, որ արած լինի։ Հայրիկը տեսնելով, որ կինը, երդւում, պատասխանում է, այդ ժամանակ Հայրիկը հրամայում է, որ կնոջ մի սենեակում փակված պահեն։ Երկու ամբողջ ամիս պահելուց յետոյ տեսնում են որ կինը յղի է։ Հայրիկը կնոջ մի թուղթ տալով ճա՛ ապարհում է Դավրէժ։

Հայրիկը հետևեալ որոշումն էր արել, որ Սարաճեան դադաշը կնոջը տարեկան, իրեն սեփական գրպանից 50 թիւմէն վճարէ։

Կինը Արաքսի ափերի մօտ մի զաւակ է ծնում, վեր առնում բերում է Դավրէժ։ Մեր Ս. դադաշը առանց կարմրելու ամաչելու գաղտնի կերպով կնոջ յայտնում է որ ինքը տարեկան 50 թիւմէն կը վճարէ միայն թէ խնդրում է որ ձայնը չը հանի։

Ահա այսպէս մեր Ս. դադաշը, որը լինելով հոգևորական և որի ազնիւ պարտականութիւնն է, միշտ բարի օրինակ դառնալու իրեն յանձնված ժողովրդին, ինչ ենք տեսնում, խաբելով բռնաբարում է մի կնոջ։ Պ. Յ. Ք-եանցի հրամանիք դիշեր, մեզ հանրածանօթ Ս. դադաշը պ. Յ. Ք-եանցի հետ միասին գալիս էին եկեղեցի։ Մարդ ինչքան լիրը, սրիկայ, այն էլ փողոցային սրիկայ պէտք է լինի, որ փողոցում, առանց կարմրելու, գետինը անցնելու մէկին գրկէ։ Ես կարծում եմ, որ մինչև անգամ բարբարոս ազգերի մէջ անգամ չեն համարձակվել առանց կարմրելու փողոցում այդպիսի մի լրբութիւն գործելու, թող այժմ մեր յարգելի ընթերցողները դատեն թէ ինչքան պէտք է սրիկայ լինի մեր Ս. դադաշը, որ փողոցում գիշերայ այդ մթնում գրկում է Յ. Ք-եանցին և հետևեալ խօսքերն է ասում։ Ք-եանց երանի Յ. Ա-եանցին, որ վաղը իրիկուն սիրուն հարսին գրկելով կը ննջանայ և ինչ երջանիկ ժամեր կը լինին պ. Յ-ի համար։ Ա՜խ երանի նրան, որ իր կեանքում առաջին գիշեր կը քնէ նորահարսի ծոցում։ Եւ այս խօսքերին վկայեն այն կանայք, որոնք դուրս էին եկել տնից հարսանեաց հանդէսին դիտելու, տանիչի վրայից։

Սագ

ՆԱՄԱԿՆԵՐ ՄԱՐԱՂԱՅԻՑ

—

10 յունվ. 96

Ամսոյս 1-ի և 3-ի գիշերները տեղի սուղութեան պատճառով երկու անգամ տեղի ունեցաւ «ընթերցասիրաց-դրատարանական» ընկերութեան ընթերցարանի դահլիճում մի խումբ եռանդոտ, սիրող երիտասարդների կողմից գրական երեկոյթ, ողբերգական ինքնուրոյն «չը խնայել ազգի դաւաճան զաւակներին» դրաման (հեղինակութիւն պ. Մ. Մելիք Սայեադեանցի) և «Մադոյի կտակը» կատակերգութիւնը։

Երեկոյթը բացեց մեզ ծանօթ Ֆալչի Յովնան վարժապետը ? մի անիմաստ, անկապ, հատ ու կտոր ու բոլորովին ափեղցփեղ ճառով, որը իր անմիտ բովանդակութեամբը մեծ ձանձրոյթ ու խորին զզւանք պատճառեց հանդիսականներին։ Իրենց իմաստալից, հասարակական գիտական բովանդակութեամբ աչքի էին ընկնում պ. Ա. Դարբինեանցի «ինչպէս ստեղծուեց ներկայ կեանքը» և պ. Մ. Մելիք Սայեադեանցի «մեր նպատակը» ճառերը, որ արժանացան հանդիսականների կողմից բուռն ծափահարութեանց։ Ոչ պակաս յուզիչ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրայ պ. Ի. Յովհաննէսեանի արտասանած Նոր տարեայ ասթիւ կարճ, բայց ազդու և գրաւիչ ճառը։

Իսկապէս կատարեալ զայրոյթ է պատճառում մեզ այդ հանգամանքը, որ խումբը թոյլ է տուել Ֆալչու նման մի անկիրթ ու անընդունակ մարդու բեմ բարձրանալ և հնադարեան փթած ուղեղներից բղխած անպէտք խօսքերով կորցնել միանգամայն երեկոյթի նշանակութիւնը ու իսկական էութիւնը։

Ողբերգութիւնը ներկայացնում էր մի իրական, բայց տխուր, տեսարան, ուր անմիջապէս աչքի էին ընկնում մեր հայ վաշխառուներն ու վատերը իրենց մարմնացած անբարոյականութեամբ..... բայց թէ այդ կենդանի տիպերը կարողացա՞ւ մի որոշ չափով ազդեցութիւն ունենալ մեր հասարակութեան վրայ,— ահա՛ այդ է տանջող հարցը։

Ողբերգութեան մէջ խաղացողներից առաւելապէս աչքի էին ընկնում Մըղդուսի Սարգիսը (Յարութիւն) և Տաճկահայաստանցի Կրպէն (Ա. Դարբինեանց) որոնք շատ բարեխղճութեամբ վերաբերուեցին դիպի իրենց դերերը։ Իր սրախօսութիւններով պակաս զւարճութիւն չը պատճառեց հանդիսականներին պ. Ռ. Բժշկեանցը ծառայի (Հաթամ) դերում։ Իսկ կատակերգութեան մէջ հո Մադեն (Ա. Դարբ.), Կարօն (Արշ. Ազարբէկեանց) և տիրացու Մկոն (Յար.) ծիծաղու կոտորեցին ժողովուրդին.

Դերասանները, ուղիղը խօստովանած, չը նայած զանազան աննպաստ հանգամանքներ ի, բոլորն էլ իրենց դերերում յաջող դուրս եկան։ Խիստ սրտաճմլիկ և աղէկտուր տեսարան էր ներկայացնում կենդանի պատկերը։ Բեմի վրայ այս ու այն կողմը եռևում էին քարի կոյտեր, մէջ տեղում ցցված էր ազատութեան արիւնագոյն դրօշակը. որի տակ անշնչացած ընկել էին հայրենիքի արի, նահատակ զաւակները։ Քարերը, բեմը, դրօշակը, բեմի վրայ թափթփած զէնքերն ու քաջերի մարմինները ներկւել էին արիւնի գոյնով, իսկ ընկած դիակնե-

րի միջից նաղաղ, հազիւ լսելի ձայնով մրմնջում էր վիրաւոր Գուրգէնը (պ. Մ. Մելիք Սայեադ.) որը մորմոքիչ ու արտասուալի (մնաս բարեաւով) լացացրեց բոլոր ներկայ եղողներին։ Հանդիսականները խիստ գոհ և լաւ տպաւորութեան տակ թողին ներկայացման տեղը և մօտաւորապէս ժամը 5-ին (ը. պ.) ցրուեցաւ,

Այդ ներկայացումները, որ յաջողութեամբ կարողացան գլուխ գալ, շնորհիւ և նախաձեռնութեամբ պարոնայք Մ. Մելիք Սայեադ. Ա. Դարբ. և Ս. Ստեփանեանցի էր, որոնք աննպաստ պայմանների մէջ անգամ առ ոչինչ համարելով մի ոմն կինդօր (քսակհատուցեան ներկայացուցիչ) այնտեղ գրած նամակների յարուցրած խոչնդոտներն ու արգելքները, առաջ անցան.....

Դէպի սիրող խումբը ցոյց տուած աջակցութեան համար խորին շնորհակալութեան և համակրանաց արժանի են պարոնայք Մ. Աֆթանդիլեան և Մ. Խալաֆեան, որոնք սոյն աննման բարենպատակ գործերում չեն խնայել իրենց եռանդուն գործունէութիւնը և քաջալոյս եմք, որ կը շարունակեն։ Զուտ արդիւնք սպասւում է 30 թուման.

Սակայն, ի դէպ, չենք ուզում աչքաթողնել այն տգեղ երևոյթը, ոլ մի քանի հաստափոր դրսի աղաներ, որոնք ոչ մի կերպով չեն աջակցել ներկայացման (խոստովանք լինի մի մի տոմսակ վերցնելը) յանդգնում են միջամտել խմբի ներքին գործերի ու հաշիւների մէջ, պահանջելով որ հաշիւն ու ներկայացման արդիւնքը իրենց տրւի, որպէսզի իրենք ծառայեցնեն մի որ և է բարի նպատակի (sic)։ Երևի մեր կեղեքիչ հաստափորների անյատակ դրսանները կարօտել են հասարակական անուշ փողերի, բայց ժողովրդական առածն ասում է (էն վաղ էր, որ էշը կաղ էր,) դիմակները պատռուել են արդէն, հասարակական գողերն ու աւազակները ճանաչւել են այլ և։

Հանդիսատես

---

17 յունվար 97

Սմսոյս 1-ին մի ներկայացում տուեցին. ի նկատի ունենալով տեղի սուղութիւնն և անպատրաստականութիւնն բարեբախտաբար սպասածից աւելի յաջող անցաւ ներկայացումը շնորհիւ մի քանի եռանդուն և գործունեայ անձանց։

Արդէն յարգելի ընթերցողներին յայտնի է, որ ազգային գործերն Մարաղայում տարիների ընթացքում կուտակուած և անիրագործելի է շնորհիւ մեր մի քանի անարժան, կեղտոտ, անձնասէր և եսամոլ աղաների։

Ուստի հարկ համարեցի երկտողով յարգելի Շաւիղի միջոցաւ յայտնել Մարաղայի ազգային գործիչներին, որ փոքր ի շատ է էլ ուշադրութիւն դարձնեն իւրեանց չորս կողմն կուտակուած և իրագործման կարօտ առօրեայ հարցերի վրայ, որը իրենց սեպուհ պարտականութիւնն է։ Ի՞նչ է պատճառն, որ այսքան երկար ու բարակ տարիների ընթացքում Մարաղէն չի ունեցել ոչ մի կանոնաւոր դպրոց և ոչ մի կանոնաւոր ընթերցարան։ «Մօտ չարս ամիս է, որ Թաւրիզու ընթերցասիրաց գրադարանական ընկերութիւնն նոր բացել է ձրի ընթերցարան» ահա թէ ինչու դրանց ինչ փոյթ, որ ազգային ուսուցիչն ֆայտոնթեամբ է զբաղուած փոխանակ առանձին ուշադրութիւն դարձնելու դպրոցի կանոնաւոր առաջ գնալուն կամ թէ դրանց ինչ գործն է, որ տէր Ալէքսան ջանն հիւանդութեամբ է պարապում, որը հասարակ տէր ողորմեան ասել չը գիտէ, բաւական է, որ այս վերջիններս այսինքն Ֆալչին և Տէր-տէր Ջանն աղա մականուն կպցնեն հասարակական գործիչների պոչին, սրանով ամեն բան վերջանում է։

Մի բան, որ ինձ շատ էր հետաքրքրում այն էր թէ ինչու պ. Մ. Խալաֆեանցն այդքան ջերմ պաշտպան էր հանդիսանում Յովհանին և տէր Ալէքսանին. պա, զարմանալու հարկ չը կայ միայն թէ պ. Մ. Խալաֆեանցին շնորհել էին աղա մականուն. հէնց այդ աղա մականունն է որ քանդեց խեղճ հասարակութեան տունն, որը բռնաբարեց խեղճ ժողովրդի ձայնն։

Խեղճ հայ ազգ, ինչ պիտի լինի քո վիճակն քանի որ պ. պ. Մ. Խալաֆեանցի, ուստայ Պետրոսի և այլն..... նման հերոս գործիչներ ունիս։ Վերջացնելով նամակս իբրև բարեկամ խորհուրդ կտայի այդ պարոններին, որ աւելի լաւ է շուտով հեռանան ասպարէզից քանի որ անարժան և անընդունակ են այդ պաշտօնին թողնելով, ասպարէզն այն անձանց, որոնք աւելի եռանդուն և գործունեայ են։ Ս.

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

18 յունվար 97

Դեռ 96 թի Սեպտեմբերին էր, երբ մենք լսեցինք Սարաճեան վարդապետը դուրս է եկել իւր թեսի վիճակներին այցելութեան, զանազան բարի նպատակներով։ Լսելով այս լուրը, մենք շատ ուրախացանք որ վերջապէս Դավրէժու առաջնորդարանը հետաքրքրւում է վիճակների դրութեամբ և դուցէ մի դարման կը մտածի իւր կարօտ, անկեալ և մինչև իսկ հայութիւնը մոռացած վիճակների համար։

Անհամբեր սպասում էինք հայր Սարաճեանի գալուն. այդ օրն էլ հասաւ. Հ. Սարաճեանը եկաւ Ուրմի, բաւական մեծ շուքով ընդունեցաւ հասարակութիւնից. նրա համար եկեղեցու մօտ մի ան տեղ էին պատրաստել և այն տանը տեղաւորուեցաւ։ Սովորութեան համեմատ գնացինք տեսութեան. բաւականին խօսելուց և ժողովրդի ցաւալի դրութեան մասին տեղեկութիւններ տալուց յետ, մեզ միամտացրեց ձթէ այստեղ անպատճառ ես իմ հաշուով ուսումնարան կը բանամ։ Մենք այդ խօսքերի քաղցր ազդեցութեան տակ ուրախ սրտով դուրս եկանք Հ. Սարրաջեանի մօտից, յուսալով որ անպատճառ կունենանք մեր սրտի միակ բաղձալին—ուսումնարանը։

Հայր Սարաճեանը տեղական արհեստաւոր դասից մի քանի հոգի ընտրելով հոգաբարձու է նշանակում. բայց պիտի ասած լինել որ այդ մարդիկը բոլորովին արժան չէին հոգաբարձուական պաշտօնին, ոչ հայերէն գիտեն և ոչ էլ կարդալ, ուր մնաց որ ուսումնարան կառավարել կարողանան։

Հ. Սարաճեանի այդպէս վարելու պատճառն այն է ժողովրդի հարգատ անդամների ձեռքով գործել և այդ ի ցոյց դնել ժողովրդեան առաջ և դրանով գրգռել ժողովրդական ինքնաբուխութեան եռանդը։

Բացի այդ երկու նամակներ էլ գրելով, թողնում է Ուրմիոյ առաջնորդական տեղապահ պ. Մարգար տէր Եսայեանի մօտ, նամակներից մէկը ուղղած էր Սալմաստու Փայտաջուկ գիւղի նախկին ուսուցիչ պ. Մարգար տէր Յովհաննէսեանին, որով հրաւիրում է պարոնին գալ Ուրմի և ուսուցչական պաշտօն վարել։ Ուսուցչական ռոճիկը կստանայ իրանից, երկրորդ նամակը Ուրմից հայ հասարակութեան ուղղած, այդ նամակը նախ քարոզում է ուսման կարևորութիւնը և քաջալերում է ժողովրդին բաց անելով ուսումնարանը իր ծախքին, վերջում գրում է թէ այդ նամակը իբրև ապահովագիր իր խօսքը թողնում է այստեղ։ Հոգաբարձութիւնը և այդ նամակները կարդի դնելուց 3 օր յետոյ աճապարում է գնալ Դավրէժ (այդ ժամանակ Դավրէժում թեթեռ մի դէպք է պատահում և հեռագրով հայր Սարաճեանին կանչում են Դավրէժ)։

Սարաճեանի գնալուց մի քանի օր յետոյ, Պ. Ս տէր Եսայեանցը ժողով է կազմում հրաւիրելով հասարակութեան անդամներից մի քանիսին, հոգաբարձական կազմութիւնը, (որը արդէն լուծուած էր մի ինչ որ դգմազլուխ խանի պատճառով) և ներկայացնում է հայր Սարաճեանի նամակները ժողովրդին։

Հարկ է լինում նորից ուսումնարանի կարևորութեան մասին խօսել (թիւրքերէն որովհետև շատ քիչերն էին հայերէն հասկանում) և [illegible]։

Վերջապէս երկար խօսակցութիւններից յետոյ, բոլոր ժողովականները տն եզրակացութեան եկան որ բացի Սարաճեանցի նամակներից, առ այժմ ուրիշ միջոց չը կայ որով բաց անէին ուսումնարանը։ (արդէն 94 թուին եկեղեցու հետ միասին է շինուել ուսումնարանի շինութիւնը) և որոշեցին հայր Սարաճեանի պ. Մարգարին ուղղած նամակին մի ուրիշ նամակ ժողովի կողմից և յայտնել որ ոչ մի միջոց չկայ այստեղ, որով կարելի լինէր առ ժամանակ հոգալ ուսուցչի ծախքերը, ուրեմն իր կողմից մի նամակով պիտի դիմէր հայր Սարաճեանին իր եռամսեայ վարձը պահանջել իր ներկայ ծախսուց համար մի ուրիշ նամակ էլ նոյն մտքով գրեցին Դավրէժ, որ գէթ ուսուցչի եռամսեայ վարձը հասցնէ որով ուսուցիչը ապահովւած գար իր պաշտօնը վարելու։ Նամակում, ի միջի այլոց, գրում են որ եթէ պ. Մ. չը համաձայնի գալ Ուրմի, այստեղ մի արժանաւոր անձն կայ նրան կարելի է պաշտօնի հրաւիրել։ Ժողովը փակւում է։

Հայր Սարաճեանից գրած նամակի պատասխանը չի գալիս և մինչև հիմա էլ սպասում ենք, իսկ պ. Մ. արդէն գնացած է լինում Դավրէժ և նամակն էլ հետեապէս ստացած չէ։ Սարաճեանի այս լռութիւնը չը դիտենք ինչի վերագրենք. միթէ նա մոռացել է իր այստեղ թողած նամակը, ասենք մոռացել է, բայց ինչու ժողովի իրեն ուղղած նամակին չի պատասխանում, եթէ նա չը պատասխանէ կամ չը կատարէ իր խօսքը, այն ժամանակ պիտի խայտառակինք մենք և թէ ինքը օտարների առաջ։

Բայց ինչ է նշանակում այդ խաբելը մի միամիտ ժողովուրդի որը շատ միամտութեամբ վիրաբերւեց դէպի իր խօսքումն ու թուղթը բայց մենք յուսով ենք որ հայր Սարաճեանը չի խաբիլ, նա կը կատարի իր խօսքը և բաց անելով ուսումնարանը մեզ կուրախացնէ և իր խեղճ և զզջցած հօտը կազատէ գայլերի ճանկերից։

Ինքը Սարաճեանը լաւ գիտէ, թէ ինչ է անում ամերիկացի միսիոնարը կամ գառնազգեստ գայլ կաթոլիկ ջեզուիտը։ Էլ բաւական է որքան չարչարւեց իր հօտը այդ գաղանների ճանկերում, հաշմանդամւած է, բռնեցէք նրա ձեռքից և օգնեցէք նրան ոտի կանգնելու, այդ էլ ոչ շատ երկար ժամանակով բաւական է մի երկու տարի. ի նա կառուցանայ և իրչև նոր եռանդուն երիտասարդ, ամենայն աշխուժով առաջ կը մղէ իր գործեան կարը։

Եթէ այդ օգնութիւնը քիչ ժամանակ էլ ուշացնի, կը կորչի մօտ 1000 տուն հայ, արդէն դէպի կորուստ տանող շաւիղը բացուել է, կան տեղեր Ուրմիայում որ խնամատարութեան մոռացել են հայ լեզուն, խօսում են կամ թուրքերէն և կամ ասորի լեզուով, և աւելի վատ երևոյթ, սկսել են ասորիների հետ խնամիական կապերով կապուել, շուտով այս բոլորից յետոյ կը լինի սոսկալի անկում։ Այս բոլորի պատճառը խաւարն ու տգիտութիւնն է.

Նախնի դարերում Հայաստանի լուսաւորիչներն էլ կրօնաւորներ էին, թող Ուրմիոյ լուսաւորիչն էլ այսօր լինի մի կրօնաւոր—Ս. Սարաճեան, թող նա ամեն ջանք ի գործ դնէ, ինչ միջոցով ուզում է թող լինի, թէ հանգանակութեամբ և թէ զանազան դիմումներով, էլ ժամանակ է ուսումնարանը բաց անելու.....։

Շարդէն մի քանի զգաստութեան պրժանի անդրանիկ սկսել են, որպէսզի պարտքը վճարելու համար, վաճառականների խնութիւնում գրած փոքրիկ տուփերի մէջ ժողովւած չնչին գումարները ուսումնարանին յատկացնել, որովհետև եկեղեցու պարտքը վերջացել է։ Այդ աննշան գումարով ոչինչ չի կարելի անել։

Զնալու

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԴՐՈՒԹԵՆՆ

Բաց նամակ Պ. Ս Զօհրապեանին։

Թէհրան 2 փետր. 97

«Շաւիղի» 35-րդ համարում, կարդացի ձեր յօդուածը, որով գանգատում էք պ. Վահան Մեսրոպեանից։ Ներեցէք ինձ ցաւ յայտնել, որ իզուր են ձեր այդ գանգատները. նա գանգատից հաշուից և պահանջից վախ չունի, թէկուզ բիւր անգամներ յօդուածներով հաշիւ պահանջելու լինես նրանից։ Ես արդէն, ձեզանից աւելի լաւ եմ ճանաչում նրան. ազգային գործերի մէջ նրա խառնելու նպատակն էլ ինձ լաւ յայտնի է.....։

Առաջները լաւ չէի հասկանում, բայց հիմա լաւ գիտեմ թէ ազգի փողերը ինչ ձևերով են կլանում մարդիկ. !!! Այդ պ. Վահանի հետ, մի քիչ հաշիւ էլ ես ունեմ, բայց վախենում եմ իրեն բան ասել. մի գուցէ մի օրին հանի գլխիս։

95. թուականի վերջին երեք ամիսներում. գուցէ լսած կլինէք որ, պարապում էի հանգուցեալ Հայ. ընկ. օրիորդաց վարժարանում որպէս ուսուցիչ։ Այդ պաշտօնին հրաւիրեց ինձ պ. Վահանը, խոստանալով իւրաքանչիւր ամիսը 6. թուման տալ ինձ իմ օրական 3, ժամուայ ծառայութեանս համար։ Առաջին և երկրորդ ամսվան ռոճիկներս, էն մի կիսալով

ստացայ. երրորդ ամսականը դեռ մնում է: Քանի անգամներ, այդ վերջին ամսական ինձ հասնելիք ռոճիկը, թէ նամակներով և թէ պատգամներով պահանջեցի. սակայն, պ. Վահանը ոչ հաճեցաւ ինձ փող տալ, և ոչ էլ մի բանաւոր պատճառ տալ չտալու համար: Ես էլ ձեռք քաշեցի այդ աննշան գումարից այն տպաւորութեան տակ թէ, գուցէ ընկերութիւնը փող չունի: Բայց ի՞նչ. որչափ մեծ էր իմ զարմանքը, երբ մի միջոց առաջ, մի վստահելի անձնաւորութիւնից լսեցի (որի մօտ գտնւում էր վերոյիշեալ վարժարանի հաշուետետրն) թէ, իբր պ. Վահանը իմ 6 թումանը իր ժամանակին հատուցրել է ինձ և հետևապէս հաշուի է անցկացրել: Կուզէի իմանալ պ. Վահանից թէ, երբ շնորհեց ինձ այդ գումարը ում միջոցաւ և ո՞րտեղ:

Ես, ինչպէս վերն ասացի, ձեռք էի քաշել այդ փողից. բայց քանի որ հիմա տեսնում եմ որ արդար վաստակիս արդիւնքը պ. Վահանն է անուշ արել, ինչու չը պահանջեմ: Տես բարեկամ, ո՞րչափ հաւատարիմ ծառայ է ազգին այդ ազնիւ պարոնը: Բայց զարմանում եմ թէ մարդ էլ իր անունը կխայտառակի միայն 6 թումանի համար: Տօ ադայ, ուզում ես հօ հազարներով կեր, 6 թումանն էլ փող է, ամօթ չի՞:

Գուցէ իմ թոյլութիւնս վաղուց փորձած էր պարոնը, որ մտածեց կլանել իմ ռոճիկը և կլանեց ու մի պաղ ջուր էլ վրան խմեց. բայց չարաչար սխալուած է նա......: Առ այժմ, այսքանով ուզում էի ասել թէ, պ. Վահանի հետ մի քիչ էլ ես հաշիւ ունիմ. եթէ կարող էք, խնդրեմ մի քիչ էլ իմ հաշուի վերաբերմամբ խօսեցէք նրա հետ. տեսէք ինչ կասի:

Մ. Կարապետեան

ՀՈՒՊԻՆԿ ՔԸՖ

Հուպինկ քաֆը տեսակ մի հազ է որ և ռամկօրէն կոչում ենք (խորոզակ կամ խեղդահազ:) Այս այն կերպ փոխադրական հիւանդութիւններիցն է որ շատ անգամ երեխայոց մէջ է երևում: Կարծես այս տեսակ հազը յատկացրած է մանուկներին, որ թէև չափահասներն էլ են նշաւակ լինում այս հիւանդութեանը բայց այդ սակաւ անգամ է պատահում և այն էլ ոչ մեծ նշանակութիւն ունի: Այս հիւանդութիւնը զանազանվում ու որոշվում է ուրիշներից միայն իր յատուկ խռպոտ ձայնովը: Այդ օտարոտի, տարօրինակ ձայնը որին անւանեցինք «խռպոտ», սեղմւում ու առաջանում է շնչառութեան ժամանակում, նշանակում եմ այն ժամանակումը երբ դրսից շունչ ենք առնում մեր թոքերի մէջ և ոչ թէ թոքերից արտաքսելու րոպէներում:

Հազի պատճառները: Հուպինկ քաֆը հասարակօրէն նկատվում է իբրև մի վարակիչ հիւանդութիւն, որը կուսակցում ու միաւորվում է մի կարգ թոյնի որը մթնոլորդի մէջով հեշտութեամբ կարողանում է ճանապարհորդելով անց կենալ երկար և ընդարձակ հեռաւորութիւններ: Այս կարգի թոյնը գլխաւորապէս արձակվում և դուրս է ցնդվում մեր շունչը դուրս փչելու ժամանակներում ու այսպէս օդը ապականվում: Շատ անգամ պատահում է որ նկարագրած նշանաւոր խռպոտ հազի յայտնւելուցը քանի օրերով առաջ է այս վարակումը մանուկների մէջ հաղորդվում ու կամաց կամաց իր ներգործութիւնները առաջացնում և ողորմելի արարածներին ենթարկում տառապանքների, այս հիւանդութիւնից երկրորդ անգամ վարակուելը հազիւ հազ է պատահում.

Զգուշութիւններ: Ինչպէս վերը յիշեցինք որ գլխաւոր տրամադրած պատճառները մանկութիւնն է և մանկական հասակները յատկապէս երկրորդ տարեկաններն՝ ուստի պարտական ենք մենք ծնողներս և չափահասներս զգուշութիւններ դարձնել այդ փափուկ արարածներին և բոլոր խնամքներով նրանց ամեն տեսակ ցրտից, խոնաւ եղանակից կամ կլիմաներից և ամեն կերպ ցրտութիւններին նշաւակ լինելուց, ինչպէս անչափ քրտնած լինելուց, վերջը պաղեցնելուց, սառը ջրով մանուկներին լուանալուց տաք սենեակից յանկարծ ցրտերում տեղափոխելուց եայլներից զգուշանալ:

Նշաններ: Հուպինկ քաֆի (խորոզակի) թերսւելու տեւողութիւնը անհաստատ է: Բայց երևելի ու խոհուն բժիշկներից շատերը ստուգում են որ հիւանդութիւնից երեք չորս օրով առաջ է սկսում վարակման նշաւակութիւնը. Նշանները բաժանուած են մի քանի աստիճանների:

Առաջին կամ հարբուխային աստիճան, սկըզբում որոշ նշաններ չը կան այլ միայն տենդում է որը շատ անգամ սաստիկ կերպով երևում է հարբուխային նշաններով, այսինքն քթիցը առատ հեղուկ է հոսում, փռնգում է. աչքերի կարմրութիւն է ստանում և սեէպ սեէպ երկարատև հազ է ունենում. որը նախ չոր ու կոշտ է լինում և ապա յաջորդում է կակուղ մի յառկացեալ կրծքի մաքրութիւն: Այս աստիճանը երկու օրից մինչև երկու երեք շաբաթ էլ տեւում է, բայց ըստ իս, տեւողութիւնը կախումն ունի հիւանդութեան սաստկութիւնից:

Երկրորդ կամ ջղացաւային աստիճան: Անակնկալ կամ յանդուգն կերպով առանց որոշ յայտնի պատճառների սկսում է հազի մի գրգռում: Հիւանդը իր կոկորդում խտղկտուկ) կամ ուրիշ կերպ անախորժ զգացողութիւններ է ունենում: Այս տեսակ հազը շատ սաստիկ և տաղտկալեցնող է և բաղկացած է մի քանի կարճ, արագ ցնցողական և ուժգին շնչառութիւններով, որին հետևում է երկարեալ, պարզ ու ցուրտ շնչառութիւն և որին անւանում ենք «հուպ»: Եթէ հազը երկարատև է վերջերումը գրեթէ «հուպը» դժւարաւ է լսվում, և անձայն լինում, սովորաբար այս կարգի հազը աւարտվում է այն ժամանակ միայն երբ կրծքից արտաքսվում է մեծ քանակութեամբ թանձր, մածուցիկ, պարզ և մաքուր հեղուկ, այդ ժամանակ հիւանդը սկսում է քրտնել և ռնգերից հոսում է հեղուկը: Սակաւ չէ պատահում որ այս դրութիւնում փսխել էլ առաջանում է: Շընչարգելութիւնը երբ սաստկանում է երեխայն մաքուր օդի կարօտելովը՝ նրա բարակ տամարների մէջում արիւն է հաւաքվում դէմքը մուգ կապոյտ գոյն ստանում և աչքերը արտասուքներով լցվում է, սովորաբար մի անգամ չարունակ հազից վերջ (after a f.t of cough) կարծվում է որ հիւանդը շնչասպառ կը մնայ, լանջքի մկանունքները ցաւում ու այսպէս այս տեսակ նշաններն մի ակնթարթում անցնում են: Իբրև պատահական դիպուածներ երբեմն արիւն էլ է հոսում աչքերից քթից, բերանից, ականջներից և կրկըղանքի անցքից, և հիւանդը առանց հասկանալու ակամայ միզում և հղտռում է խշտանկութիւն է դտնում, կրկըղանքի անձքը դուրս է ցցվում, որ կարծես մարմնի դանազան մկանունքները բանական [illegible]ժումներ է գործում և այսպէս փաքրիկ խեղճ մանուկը հիւանդութիւնից կծկվում ու տառապվում է: Եթէ քննողական գործիքով (Stethoscope) լանջքը լաւ քննելու լինենք կարող կը լինենք նշմարել որ օդը բաւականին և յարմարութեամբ չէ մտնում թոքերին մէջ:

(Կը շարունակուի)

Զերամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժանտախտը Պարսկաստանին մօտենալով՝ պարսից կառավարութիւնն խիստ միջոցներ է ձեռք առել դէմը առնելու համար:

—

Եկող համարից սկսած Շաւիղում կը սկսենք ժանտախտի մասին մանրամասն բժշկական տեղեկութիւններ տալ ընթերցողներին և միևնոյն ժամանակ նրա դէմը առնելու համար միջոցներ մատնանիշ կանենք:

—

Հաստատ աղբիւրից լսում ենք, որ Սալմաստի կողմերում սահմանագլխի մօտ, Շիրայ և Սուննի ցեղի մէջ սաստիկ ընդհարումներ է տեղի ունեցել, այնպէս որ կառավարութիւնը այս օրերս մեծ քանակութեամբ զօրք և թնդանօթներ ուղարկեց այն կողմերը, սպասում ենք մեր թղթակիցներից մանրամասնութիւնների:

—

Ինչպէս լսում ենք Ռուսաստանից շուտով մի քանի բժիշկներ պէտք է հասնին այստեղ և այստեղից փոխադրւին սահմանները քարանթինաներին հսկելու:

—

Շաւիղը շուտով Հնդկական սահմանագլուխներում իր սեպհական թղթակիցները կունենայ և հիւանդութեան դէպքերը հեռագրով կը հաղորդեն մեզ:

—

Ն. Ջուղայում բողոքական հայերի և պարսիկների մէջ մի ընդհարում է պատահել և ինչպէս պատմում են սպանութիւն էլ տեղի է ունեցել: Ինչպէս երևում է, դէպքը պատահել է կրօնական տեսակէտից: Սպասում ենք մանրամասնութեան:

—

Հաստատ տեղից իմացանք, որ Թէհրանում պ. Ռ-ի դրդմամբ մի քանի շիրաչիներ թողել են իրենց այդ կեղտոտ արհեստը և զբաղւել ուրիշ գործերով: Այդ գործի առաջի օրինակը եղել է պ. Անդրէաս Մ. Յովսէփեանն յուսով ենք որ միւսները էլ կը հետևեն նրա օրինակին և ձեռք կը վերցնեն այդ կեղտոտ արհեստից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Գլադստոն Հայոց Հարցի մասին

Դեկտեմբերի 25-ին Հովարդէնում կատարվեց Գլադստոնի 88-ամեակի տօնախմբութիւնը: Շնորհաւորութիւն մատուցանողների թւում կար և Հայկական պատգամաւորութիւնը, որին դիմեց Գլադստոն մի ճառով, որ նւիրված էր թիւրքաց մի հարցին: Գլադստոն յայտնեց, թէ Հայերի օգտին սկսված շարժումը Անգլիայում, չը նայելով որ անօրինակ միաբան բնաւորութիւն ունէր, ցանկալի հետևանքներ չունեցաւ: «Չը նայելով դրան, ասեց հռետորը, (ես հաւատում եմ, որ շուտով կը հասնեն լաւ օրեր:) Ամօթն այն լուծը, որ դրեցին իրենց վրայ մեծ պետութիւնները, շատ մեծ է, և այլ ես չէ կարելի տանել նրան: Դրա դէմ միատեսակ վրդովվում են թէ միտքը և թէ խիղճը: «Daily News» հաղորդում է, որ Գլադստոնի ճառը անյապաղ հեռագրով հաղորդվեց Սուլթանին:

—

Փարիզից հեռագրում են «Daily News» լրագրին. «Օսմանեան բանկի վրայ թէ յարձակւում գործող հայերի մի խումբը այժմ գտնվում է Լոնդոնում: Ինչպէս յայտնի է, տասն և հինգ անձինք, որոնք բանտարկված էին, ուղարկվեցին Բուէնոս Այրէս: Բայց վերջին ամսում նրանք փող գտան և ուղևորվեցին Նիւ-Եօրքի վրայով Լոնդոն: Արմէն Կարոի ընկերներից մէկը գնաց Լոնդոն նրանց հանդիպելու:

—

Կ. Պոլսի Ռուսաց դեսպանատան թարգման Մաքսիմով, որ այնքան ազդեցիկ դեր կատարեց Օսմանեան բանկի դէպքի բանակցութիւնների գործում, կանչված է ժամանակապէս Պետերբուրգ: Ենթադրում են, որ նա պէտք է անձամբ տեղ հասցնի այն խորհրդակցութիւնների հետևանքը, որ այժմ տեղի ունեն դեսպանների մէջ, և որոնք մեծ գաղտնապահութեան են ենթարկված:

—

Իտալական «Roma» լրագիրը խօսելով Սուլթանի խոստացած ներման մասին, ասում է, որ այդ բոլորը միայն մի կատակերգութիւն է և ծաղր: Հայերը, աւելացնում է լրագիրը, չը խաբվելով այդ բանից, պէտք է յամենայն դէպս հանգիստ մնան մինչև գարուն: Ինչու մինչև գարուն, այդ յայտնի չէ:

—

Կ. Պոլսից գրում են. «Կալանաւորված հայերից շատերը մերժում են երդում ընդունել Սուլթանին հաւատարիմ մնալու համար: Մեծ վէզիրի հրամանով, դադարեցված է հայերի արձակելը բանտից: Մուսուլմաններից արձակվել են 63 հոգի: Ընդհանուր ներում յետ առնելու պատճառով, մեծ պետութիւնների ներկայացուցիչները խորհրդակցութիւն ունեցան Աւստրիական դեսպան բարօն Կալիչէի հետ: Հայ յեղափոխական կոմիտէտը իրան մշտական յայտարարեց:

—

Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Ռուսաստանը միայն այժմ է համաձայնվել ստիպողական միջոցներ ձեռք առնել Բ. Դրան դէմ այն դէպքում, եթէ նա հրաժարվի խոստացած ռեֆորմները

իրագործելուց: Դրանով նրանք կամենում են յայտնել, թէ մինչև այժմ Ռուսաստանն է եղել, որ թոյլ չէ տուել ոյժով ստիպել Սուլթանին ռէֆորմները մտցնելու: Այդ առիթով, «Nord» լրագիրը մի հերքում է տալիս, որի մէջ ասում է, «Ոչ թէ Ռուսաստանն է համաձայնվել ընդունել մեծ պետութիւնների առաջարկած միջոցները, այլ ընդհակառակը, մեծ պետութիւններն են պարզ և անպայման կերպով յարել Ֆրանսուական ծրագրին: Ինչ վերաբերում է ոյժ գործադրելուն, դեռ արևելեան հարցի սկզբում Ռուսաստանը զգուշացրեց Բ. Դրան, թէ չը նայելով իր բոլոր ցանկութեանը ազատել նրան բռնի միջոցներից, նա այնուամենայնիւ ստիպված կլինի դիմել այդ միջոցներին այն դէպքում, եթէ օսմանեան կառավարութիւնը, չը հասկանալով գործերի լուրջ վիճակը, կը սկսէ առաջուայ նման կրաւորական դիմադրութիւն ցոյց տալ Եւրոպայի արդարացի խորհուրդներին»:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

—

Լոնդոն. 9 փետր. (ն. տ.) վերջին լուրերը Կրէտայից հաղորդում են թէ ապստամբները միութիւն են յայտարարել Յունաստանի հետ, և թէ բոլոր Յունական մարտանաւերը պատրաստել են ծով մտնելու:

Լոնդոն. 10. փետր. Մաժօր Բորը ընդունել է հրամանատարութիւնը Կրէտայի ժանդարմէրիայի, որը նա սկսում է վերակազմել:

«Times»-ի թղթակիցը հաղորդում է թէ Քանիայում, բացի Մուսուլմաններից ոչ մի քրիստոնեայ չէ մնացել:

Յունաց մարտանաւերը պատրաստել էին ծով մտնել և համար,

Յունաց մարտանաւերը Քանիայում ողջունել են Թրքաց դրօշակին:

Ֆրանսիական կառավարութիւնը արտօնութիւն է շնորհել Հնդկաստանի վարձկած նաւահանգիստներից անցնող ճանապարհորդներին, մտնել Ֆրանսիայ. միայն Փուիլլաքի, Ս. Նազարիէի, Հաւրի և Դիւնկիրքի վրայով, այն էլ քարանթինայի ենթարկւելով:

Վերջին լուրերը Կրէտայից հաղորդում են թէ, մուսուլմանները հրդեհեցին Ռեթիմօն, և 15,000 քրիստոնեաներ պաշարել են արևելեան Կրէտիան: Մեծ շարժում է շարունակւում Աթէնքում, առանձին պատերազմական նաւեր, ճանապարհւել են Կրէտայ երթալու համար, Յունաստանի իշխան Ջեօրջի հրամանատարութեան ներքոյ:

Լոնդոն. 11 փետր. Բ. Դուռը շրջաբերական է դուրս տւել որով նա կոչում է պետութիւնների օգնութիւնը «օրդրը» պահելու Կրէտիայում: Պետութիւնները խորհում են դիմել Աթէնքին յետ կոչելու Յունական մարտանաւերն Կրէտայից:

Լոնդոն. 11 փետր. Յունաստանը յայտնել է պետութիւններին որ ինքը չի կարող անտարբեր և լուռ մի դիտող լինել Կրէտայի դէպքերի վրայ: 600 զինւած կրէտացիք նաւեցին Յունաստանից դէպի Կրէտայ:

Մի ուրիշ նաւախումբ պատրաստուած է նաւելու: Թարմ Ոյժեր են ուղարկւում Յունական սահմանագլուխներն:

Քուրզօնը պատասխանելով կոմոնների հարցերին՝ ասաց թէ Կրէտայում տեղի ունեցած արտաքին ժողովի ելքը ցոյց է տալիս թէ վերջին շարժումների ընթացքում, գլխաւորապէս քրիստոնեաներն են ապստամբ հանդիսացել:

Թէպէտ Կրէտացւոց օգնելու համար Յոյները համակրւում են, սակայն արտաքին մարտանաւերն անտարակոյս պիտի արգիլեն նրանց (յոյներին) գործունէաբար միջամտելու:

Կասկած է բարձրանում Ֆրանսիայում և Գերմանիայում, թէ երբ Բրիտանիան է գրգռել կրէտացիներին որպէս զի Եգիպտական հարցը աննկատելի մնայ: Կատաղի կռիւներ են տեղի ունենում Քանդիայում և կոտորածներ և հրդեհներ են լինում Սիթիայի շրջապատող գիւղերում:

Լոնդոն. 14 փետր. Յունաց տեղեկագիրն առ Լորդ Սալիսբըրին, պնդում է թէ Յունաստանն անպատճառ պիտի արգիլէ Թրքական զօրքերին Կրէտայի հողի վրայ իջնելուց:

Լոնդոն. 15 փետր. Յունաց պատերազմական նաւախումբը հասել է Քանիայ: Թուրքիան ժողովում է իր Ալբանական անկանոն զօրքերը, Թեսալիայի սահմանագլխի վրայ և Յունաց զօրքերն նաև դրկւում են սահմանագլուխն:

Օնօրոբլ Վ. Բրոտրիկը՝ նոր մի զօրքի առաջարկութեան մասին, իր տւած պատասխաններով պաշտպանեց պահպանողական առաջարկը որը հաւանեց և Վօլսէլին. այդ ոյժը, աւելացնում է 2000 օրաշէտլ զինւորներն և տալիս է ամենայն զինւորական կազմակերպութիւն պահպանողներին: Բրոտրիկի խօսակցութիւնը լաւ տպաւորութիւն թողեց, նա, յետոյնուս յառաջ բերեց զինւորական հաշիւն որը ասեց թէ պիտի կատարելապէս վերակազմէր հեծելազօրք որով առաջին հեծելազօրաց գունդը միշտ պատրաստ կը մնայ աշխոյժ ծառայութեան համար:

Յունաց տեղեկագիրը առ Սոլզբրին շատ խոստալահանջ է այսուամենայնիւ պետութիւնները համաձայնել են զսպել Յունաստանին և ապստամբներին:

Արտաքին քոնսուլները յայտարարում են թէ Հալէպը չեզոք է:

Յունաց ծովային հրամանատարը խոստացել է որ արտաքին մարտանաւերին 40 ժամ առաջ զեկուցում տայ յառաջ քան յարձակւել Քանիայի վրայ:

Բրիտանական զինանաւակները Հարրիէր, Դրիատ, Բլէզեր, և Արտէնդ ճանապարհւել են Կրէտիայ Մալտայից:

Փետր. 11-ին. Զրահաւորները դիմադրել են Թրքական խումբին և վերադարձրել են նրանց մինչև նաւահանգիստ:

Քրիստոնեաները Քանիայի բերդին դէմ թնդանօթներ յարձակեցին:

Լոնդոն. 16 փետր. Դեսպանները Կ. Պոլսում, խորհրդատրել են պետութիւններին, պաշտպանել Մուսուլմաններին:

Կ. Պոլիս. 16. Թրքական զօրքը Մակեդոնիայում, 100,000ի չափ թարմ ոյժեր է ստացել:

Աթէնք. 16. վերջին լուրերը Կրէտայից հաղորդում են թէ, Քանիայի բերդապահները յարձակւել են քրիստոնեաների վրայ և ամբողջ օրը կռւել են, բայց հետևանքը դեռ յայտնի չէ:

Բերլին. 16. Վիլհէմ Կայսրը, երեկ այցելեց Բրիտանական, Աւստրիական և Ռուսական դեսպաններին, և իւրաքանչիւրի հետ առանձին խորհրդակցութիւն արեց Կրէտայի մասին, յետայնու նախարարները ժողով ունեցան արտաքին գործոց ատեանում:

Լոնդոն. 17. Երեկ, 3 շոգենաւեր Յունաց զօրքով ճանապարհւեցին Կրէտայի համար: Նրանց ճանապարհւելուց առաջ Թագաժառանգը այցելեց նրանց:

Յունաց կառավարութիւնը հրամայել է անմիջապէս ռէզրվներ պատրաստել: Իշխան Նիքօլասը, իբրև թնդանօթաձիգների հրամանատար, ճանապարհւեց Թեսալիայ:

Լոնդոն. 20. փետր. (ն. տ.) Times-ի թղթակիցը Պետերբուրգում, հաղորդում է թէ, Ռուսական մարտանաւերը և զօրքը, Սև ծովի նաւահանգիստներում, պատրաստուած են, դէպքը պատահած, պատերազմական մի շարժում անել Թրքաց դժւարութիւնների համար:

Քանիայից մի հեռագիր հաղորդում է Times-ին թէ, Սելինայում ապստամբները կոտորել են 104 Մուսուլմաններ. որոնց մէջ կային 20 կին և 64 երեխաներ:

Սալսբըրին յայտնել է պետութիւններին թէ, Յունաստանի դէմ որևէ մի քայլ առնելուց առաջ, ինքը ցանկանում է ուրիշների դիտաւորութիւնը իմանալ Կրէտայի ապագայ կառավարութեան մասին:

Իտալիա համաձայնում է Սալսբըրիի դիտաւորութեան հետ:

Յունաց զօրքը, Կրէտայում տիրել են Վուքօլիզի բերդը, և գերել են 250 Թրքեր պահապան զօրքի մնացորդը վերադարձրել են Քանիայ

100 Եւրոպական նաւատորմիղներ իջել են Սիտիայ:

Մեծն Բրիտանիան, մտածում է մի միջոց ձեռք բերել որով կարողանայ Յունաստանին պարտաւորացնել թողնել Կրէտան և կարծում է թէ Յունաստանը իր կարողութիւնից շատ աւելի մեծ լծի տակ է ձգել իրեն:

Գերմանիան, Կրէտայի ապագայ կառավարութեան մասին, բանակցութիւն անել չի ընդունում, բայց ասում է թէ Յունական աննեքսասիօն միութիւնը չը պիտի լինի և Յունաստանը պիտի թողնի Կրէտան:

Յունաց կառավարութիւնը, յայտնում է պետութիւններին թէ, ինքը իր վրայ կառնի ամեն պատասխանատուութիւններ Կրէտայում իր արած բոլոր շարժումների համար:

Քրիստոնեաները, քաջկերպով ռմբակոծում են Քանիան, և Թրքերը պատասխանում են բերդից. մեծ արիւնհեղութիւն պիտի հետևի:

100 Բրիտանական, 100 Ֆրանսիական, 100 Ռուսական, 100 Իտալական և 50 Աւստրիական նաւատորմիղներ իջել են Քանիայ: Ուրիշ նաւատորմիղներ էլ կան Ռեթիմօյում և Քանդիայում:

Լոնդոն. 17 կէս գիշերին, Յունաց զօրքին յաջողւեց Քանիայի ցամաքը իջնել: Կապիտան Վասօսը կրէտացիներից պահանջում է յանձնել Քանիան:

Յունաստանը արհամարհում է պետութիւնների միջամտութիւնը, և Աթէնքում լինող դեսպաններին լուր է հաղորդել թէ երբ ինքը (Յունաստանը) պիտի շարունակի ուղարկել զօրքեր Կրէտայ:

Յունաց վերջին «ռէզրվներն» անգամ կռւի են կոչւում:

Յունական 2 շոգենաւեր ապստամբներով լի անցեալ գիշեր թողին Աթէնքը Կրէտայի համար: Միևնոյն ժամանակ պետութիւնները վճռել են համոզել Յունաստանին որպէս զի թէ կարելի լինի, խոնարհի բայց թէ Ջեօրջ թագաւորի յարաբերութիւնը Ցարի, Վիլհէմ կայսրի և Անգլիայի թագուհու հետ, բարեխառնութեան պիտի հակի:

Լոնդոն. 17 Արտաքին հրամանատարներն Կրէտայում վերջնագիր են ներկայացրել Յունաստանի Քոմոտորին որից պահանջում են թողնել Կրէտական ջրերը:

Պատասխան դեռ չէ ստացւել:

Բ. Դուռը ուղարկում է Քարաթէօտօրի փաշային իբրև գործակալ Կրէտայում:

Յունաց զօրքը տիրեց Ագիայի բերդը (մօտ Քանիայի), բերդի մէջ կային 400 մուսուլմաններ և 100 Թրքական զինւորներ:

Լոնդոն. 28 Թուրքիան ուղարկում է 4 մարտնաւեր և 10-ը պատերազմական նաւախումբեր Կրէտայ երթալու համար և երկրորդ Աքատրօնը պիտի անմիջապէս յաջորդի: Թրքական զինւորական և ծովային «ռէզրվները» պատերազմի են կոչւում,

Լոնդոն. 21 Բերլինում և Վիէննայում լինող Բ. Դրան ներկայացուցիչները հաղորդում են թէ, Թրքական զօրքը մտաւ Թեսալոնիայ (?) այս դէպքում Ռուսաստանը յայտնում է իբր թէ ինքը միջամտելու չի:

Ֆրանսիան և Իտալիան համաձայն են Անգլիայի հետ, Պիրիան շրջապատելու (պաշարելու) խնդրի վերաբերմամբ:

60 Գերմանական պատերազմական նաւերը իջել են Քանիայ:

Մեծ խռովութիւն է տեղի ունեցել Ալբանիայում. որի սահմանագլխի վրայ ժողովւում են Թրքական և յունական զօրքեր:

Լոնդոն. 22 Երեկ առաւօտ պետութիւնները ռմբակոծեցին ապստամբների բանակները Քանիայում, որովհետև ապստամբները չուզեցին դադրել հրացանաձգութիւնից, երբ նրանք հրաւիրւած էին խաղաղել: 70 ռումբեր բացւեցին Յունաց դրօշակը իջաւ: Բրիտանական մարտանաւն էր որ առաջին ռումբը յարձակեց, թնդանօթաձգութիւ-